https://doi.org/10.46991/hc.2024.21.1.288

K. G. Mkrtchyan - "Armenian-Iranian Relations in 1991-2005", Yerevan, Institute of History of the Armenian Genocide Association, 2023, 257 p.

Karen Mkrtchyan
https://orcid.org/0009-0006-2376-0215
PhD, Institute of History, NAS RA
86-karen@mail.ru

Keywords: Armenia, Iran,
relations, political, economic, scientific, educational, cultural.

The monograph "Armenian-Iranian Relations in 1991-2005" by Karen Mkrtchyan, a researcher at the Department of History of the Institute of History of the NAS of the Republic of Armenia, Ph.D., presents in detail the bilateral political, economic, scientific, educational and cultural relations, as well as the role of the Armenian community of Iran, which had a certain participation in that process. The author, based on the documents of the Ministry of Foreign Affairs of the Republic of Armenia and the National Archives of Armenia, facts provided by scientific literature and a critical analysis of individual reports in scientific periodicals, has conducted a valuable comprehensive study and presented the Armenian-Iranian relations of 1991-2005 with convincing facts and comments.

Մկրտչյան Կ. Գ. - «Հայ-իրանական հարաբերությունները 1991-2005 թթ.», Երևան, ՀՀ Գաա Պատմության Ինստիտուտ, 2023, 257 էջ

Կարեն Մկրտչյան
պ.գ.թ, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ

Հիմնաբառեր՝ Հայաստան, Իրան,
հարաբերություններ, քաղաքական, տնտեսական, գիտական, կրթական, մշակութային։

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի Հայ գաղթօջախների և սփյուռքի պատմության բաժնի գիտաշխատող, պ. գ. թ. Կարեն Մկրտչյանի՝ «Հայ-իրանական հարաբերությունները 1991-2005 թթ.» մենագրության մեջ հանգամանորեն ներկայացված են երկկողմ քաղաքական, տնտեսական և գիտակրթական ու մշակութային հարաբերությունները, ինչպես նաև այդ գործընթացին իր

History and Culture Vol.-21(1), 2024, pp. 287-291
Received: 11.06.2024
Revised: 15.07.2024
Accepted: 31.08.2024

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.
© The Author(s) 2024

որոշակի մասնակցությունն ունեցած Իրանի հայ համայնքի դերը: Հեղինակը ՀՀ Արտաքին գործերի և Հայաստանի ազգային արխիվների փաստաթղթերի, գիտական գրականության ընձեռած փաստերի և գիտական պարբերականներում եղած առանձին հաղորդումների քննական վերլուծության հենքի վրա կատարել է արժեքավոր համալիր ուսումնասիրություն և համոզիչ փաստերով ու մեկնաբանություններով ներկայացրել 1991-2005 թթ. հայ-իրանական հարաբերությունները:

К. Г. Мкртчян - «Армяно-иранские отношения в 1991-2005гг.», Ереван, Институт истории Ассоциации Геноцида армян, 2023, 257 с.

Карен Мкртчян
К.и.н., Институт истории Национальной академии наук Республики Армения

Ключевые слова: Армения, Иран, отношения политические, экономические, научные, образовательные, культурные.

В монографии «Армяно-иранские отношения в 1991-2005 гг.» научного сотрудника отдела истории Института истории НАН РА, доктора исторических наук Карена Мкртчяна подробно изложены двусторонние политические, экономические, научно-образовательные и культурные связи, а также роль армянской общины Ирана, которая имела определенное участие в этом процессе. Автор на основе документов Министерства иностранных дел РА и Национального архива РА, фактов, предоставленных научной литературой, и критического анализа отдельных сообщений в научной периодике провел ценное комплексное исследование и представил армяно-иранские отношения 1991-2005 гг. с убедительными фактами и комментариями.

* * *

Հնագույն ժամանակներից սկսած հայությունը առնչություններ է ունեցել Իրանի հետ, հաստատել քաղաքակրթական կապեր, իսկ որոշ ժամանակաշրջաններում էլ ապրել այնտեղ, այս կամ այն չափով իր ներդրումը ունեցել այդ պատմական տարածքում ձևավորված տարբեր պետական կազմավորումների հասարակական կյանքում: Այդ պատճառով բնական է, որ խնդրո առարկա թեման գտնվում է պատմաբանների, արևելագետների և սփյուռքագետների հետաքրքրության շրջանակներում:

Հայաստանի երրորդ Հանրապետության արտաքին քաղաքականության մեջ առանցքային նշանակություն ունի հայոց նորանկախ պետության հարաբերությունները հարևան և բարեկամ Իրանի Իսլամական Հանրապետության հետ: Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականության հիմնական խնդիրը բոլոր պետությունների և, առաջին հերթին, հարևանների հետ բարիդրացիական ու փոխշահավետ հարաբերությունների հաստատումն էր:

Հայոց նորագույն պատմության պահանջված, բայց և քաղաքական արդիականություն ունեցող թեմաների նկատմամբ հետազոտողների հետաքրքրությունը ոչ միայն մեծացել, այլև ավելի առարկայական է դարձել պատմաքաղաքական տարբեր խնդիրների վերաբերյալ կատարված գիտական ուսումնասիրությունների առումով: Ասվածն առաջին հերթին վերաբերում

է հայ-իրանական հարաբերություններին, դրանցում գրանցված ինչպես ձեռքբերումների, այնպես էլ խնդիրների ներկայացմանն ու լուսաբանմանը:

Ի դեպ, ներկայացվող հրատարակությունը հեղինակի՝ այս թեմայով կատարած առաջին ուսումնասիրությունը չէ. դեռեւս 2009 թ. Երևանում լույս է տեսել Կարեն Մկրտչյանի՝ «*Իրանի դիրքորոշումը Լեռնային Ղարաբաղի հարցում 1990-ական թթ.*» վերնագրով հոդվածը, որը հրատարակվել է Հայ աստվածաբան, գիտական հոդվածների ժողովածուում (Գ, Ե., ԵՊՀ հրատ., 2009, էջ 241-250):

Մկրտչյանը կատարել է արժեքավոր ուսումնասիրություն, որին բնորոշ են թեմայի տրամաբանական զարգացումը, հետազոտական ակնառու որակները, յուրաքանչյուր ենթագլխի և ամփոփիչ եզրակացությունների հիմնավորվածությունը, գրագետ շարադրանքը և լեզվառճական մակարդակը:

Մենագրությունն ունի կուռ կառուցվածք: Այն բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացությունից, անգլերեն և պարսկերեն ամփոփումներից, օգտագործված աղբյուրների և գրականության ցանկից, հավելվածից, անձնանուններից և տեղանուններից:

Ներածության մեջ ներկայացված են թեմայի արդիականությունը, կարևորությունը, ուսումնասիրության նպատակն ու խնդիրները, ժամանակագրական սահմանները, օգտագործված աղբյուրների և գրականության համառոտ տեսությունը, աղբյուրագիտական հիմքը:

Առաջին գլխում՝ *«ՀՀ-ԻԻՀ քաղաքական հարաբերությունները»,* որը բաժանված է վեց ենթագլուխների, ներկայացված և լուսաբանված է խնդրո առարկա ժամանակահատվածում դիվանագիտական հարաբերությունների հաստատման գործընթացը, ինչպես նաև Արցախյան հակամարտության կարգավորումն ԻԻՀ-ի արտաքին քաղաքականության համատեքստում: Որոշ «խնդիրների» լուծման պայմաններում քննարկվում է ՀՀ-ԻԻՀ նուրբ հարաբերությունները միջազգային հարաբերությունների համատեքստում: Հեղինակը ներկայացնելով ԻԻՀ-ի արտաքին քաղաքականության հիմնադրույթները՝ հանգամանորեն քննարկում է իրանական շահերը և հիմնավորում, որ դրանք փոխադարձ նշանակություն ունեն երկու երկրների համար: Որոշակի հետաքրքրություն է ներկայացնում միջպետական հարաբերությունների գործընթացին հայ համայնքի մասնակցությունը, որի դեպքում լուսաբանվում են իրանահայ որոշ գործիչների՝ բանակցություններին անմիջական մասնակից և դերակատար դարձնելու պաշտոնական Թեհրանի նպատակները: Հեղինակի ճիշտ գնահատմամբ՝ այդ քայլով իրանական կողմը զերծ էր մնում պաշտոնական սառը արարողակարգից ու ավելի սերտ կապեր էր հաստատում ՀՀ ղեկավարության հետ: Անկասկած, երկկողմ կապերում ակնառու է իրանահայ անվանի գործարար և բարերար, համայնքային գործիչ Լևոն Ահարոնյանի (1930-2020) դերը:

Այս գլխում իրանական և հայկական մամուլի հրապարակումների վերլուծությամբ քննարկվում է Արցախյան հակամարտության կարգավորման հարցը ԻԻՀ-ի արտաքին քաղաքականության համատեքստում՝ եզրակացնելով, որ ՌԴ-ին բանակցային գործընթացում ներառելու իրանական կողմի նպատակն էր՝ կանխարգելել Թուրքիայի հնարավոր միջամտությունը հարցին և փոխարենն ամրապնդել սեփական դիրքերը: Հեղինակն արխիվային փաստաթղթերի ուսումնասիրությամբ պարզել է, որ Արցախյան հակամարտության կարգավորման իրանական միջնորդությունը մշակվել է Սիրիայում: Միաժամանակ հեղինակը հանգամանորեն ներկայացրել է Արցախի ճակատում ռազմագործողությունների արձագանքները

հայ-իրանական հարաբերություններում և եզրակացրել, որ բոլոր դեպքերում առանց բացառության, ըստ էության, որպես սադրող կողմ հանդես է եկել Բաքուն, որը փորձել է ռազմական գործողությունները տեղափոխել հարավ ու ծավալվել դեպի ՀՀ-ԻԻՀ սահման՝ Արաքս գետի երկայնքով: Զուգահեռաբար քննարկված են նաև 1990-ական թթ. վերջերին միջազգային հանրության կողմից հայկական կողմը՝ որպես իրանական կողմի հետ միջնորդ նախընտրելու հարցը: Եվ որպես եզրահանգում է արվում այն, որ փաստորեն որոշ դեպքերում հայկական կողմը կարողացել է իրագործել պայմանական ասած փոքր ձևաչափի միջնորդական առաքելություններ ԻԻՀ-ի և երրորդ կողմ հանդիսացող պետությունների միջև: Այդ առաքելությունների և՛ հաջողման, և՛ ձախողման դեպքերը հաստատում են, որ հայկական կողմը տարիների ընթացքում ձեռք էր բերել որոշակի քաղաքական ներուժ և, որ կարևոր է, ձևավորվել էր վստահության մթնոլորտ իրանական կողմի հետ:

Այս գլխում համոզիչ փաստերով ցույց է տրվում, որ զորավարժություններով սահմանափակված ՀՀ-ՆԱՏՕ համագործակցությունը որևէ կերպ նպատակ չի ունեցել վնասել իրանական շահերը:

Երկրորդ գլխում՝ *«ՀՀ-ԻԻՀ տնտեսական հարաբերությունները»,* որը բաժանված է յոթ ենթագլուխների, հանգամանորեն ներկայացված և լուսաբանված է շրջափակման և պատերազմի ճիրաններում հայտնված ՀՀ-ի՝ ԻԻՀ-ի հետ տնտեսական հարաբերությունների սկզբնավորումը և ԻԻՀ-ի՝ որպես ՀՀ-ին կենսապահովման և առաջին անհրաժեշտության միջոցների մատակարարի ստանձնման հարցը: Հեղինակի գնահատմամբ՝ սահմանամերձ առևտուրը նպաստել է տնտեսական և ընդհուպ կենցաղային նշանակության բազմաթիվ խնդիրների լուծմանը, իսկ Հայ-իրանական կապերի համաձայնեցման հանձնաժողովի ստեղծմամբ համակարգված բնույթ է ստացել երկկողմ առևտուրը: Ներկայացնելով սահմանամերձ առևտրական բացառիկ նշանակությունը՝ միաժամանակ ընդգծվել է, որ ՀՀ-ԻԻՀ տնտեսական համագործակցությունն իր կենսական նշանակությամբ հանդերձ ունեցել է իրավական և կազմակերպչական բնույթի բազմաթիվ բացթողումներ: Թերևս այդ հանգամանքով պայմանավորված՝ 1990-ական թթ. կեսերինտնտեսական կապերում նկատվել են ելևէջումներ:

Տնտեսական կապերի օրակարգում հատուկ ներկայացված են Էներգետիկ համագործակցությունը և իրանական կապուղիները՝ որպես ՀՀ-ի՝ արտաքին աշխարհի հետ կապ հաստատելու կյանքի ճանապարհ: Քննարկելով Արաքս գետի վրա կառուցված Իրան-Հայաստան համատեղ կամուրջի շինարարության մասին՝ եզրակացնում է, որ այն դարձավ ՀՀ-ի համար արտաքին աշխարհ դուրս գալու բացառիկ ուղի:

Արդիական նշանակություն ունի ՀՀ-ԻԻՀ տնտեսական կապերի քննարկումը բազմակողմ համագործակցության համատեքստում, որից բացահայտվում են այդ ձևաչափով տարածաշրջանում համագործակցելու առանձնահատկությունները և գրանցված խոչընդոտները:

Երկրորդ գլխում՝ *«ՀՀ-ԻԻՀ գիտակրթական և մշակութային համագործակցությունը»,* որը բաժանված է երեք ենթագլուխների, ներկայացված և լուսաբանված է երկկողմ հարաբերությունների առանձնահատկությունները նշված ոլորտներում: Շեշտադրվում է այն իրողությունը, որ գիտական բնագավառում կողմերը համեմատաբար ավելի սերտ են համագործակցել սեյսմոլոգիայի, երկրաֆիզիկայի, բժշկագիտության, ինչպես նաև իրանագիտության ոլորտներում:

Քննարկելով ՀՀ-ԻԻՀ մշակութային հարաբերությունները՝ հեղինակն ընդգծում է, որ դրանք վկայում են իսլամ-քրիստոնեություն խաղաղ գոյակցության մասին, ինչպես նաև այն, որ միջմշակութային կապերի զարգացման գործում ևս իրենց ներդրումն են ունեցել իրանահայ որոշ մտավորականներ: Ըստ այդմ ներկայացվում է մի քանի բնագավառ, ինչպիսիք են՝ պատմագիտական երկերի թարգմանություն, երկկողմ գրական կապերի զարգացում և մշակութային այլ ծրագրերի իրականացում:

Եզրակացության մեջ հանրագումարի են բերվել մենագրության հիմնական արդյունքներն ու եզրահանգումները:

Աշխատության արժանիքներից է նաև *«Հավելված»-ը*, որտեղ երկու աղյուսակներով ներկայացված են ՀՀ-ԻԻՀ առևտրի ծավալները 1991-2005 թթ.:

Աշխատութիւնը ունի անգլերեն և պարսկերեն լեզուներով ամփոփումներ, ինչպես նաև Անձնանուններ և Տեղանուններ:

Այսպիսով, Կարեն Մկրտչյանի մենագրությունն ունի գիտական արդիականություն, քանի որ հեղինակը, հիմնվելով բազմաթիվ արխիվային նյութերի և պարսկալեզու աղբյուրների վրա, որոնց մի մասն էլ առաջին անգամ գիտական շրջանառության մեջ է դրվում հենց իր կողմից, համակողմանի հետազոտման է ենթարկում հայ-իրանական հարաբերությունները: Գիրքը լիովին հանձնարարելի է մասնագիտական ֆակուլտետներում սովորող ուսանողությանը:

Մենագրության ամբողջ շարադրանքում Կարեն Մկրտչյանը դրսևորել է բարեխիղճ հետազոտողին հարիր մոտեցում հիմնախնդրի տարբեր կողմերը ներկայացնելիս: Մենագրությունն ընթերցվում է մեծ հետաքրքրությամբ:

Կարծում ենք, որ Կարեն Մկրտչյանի սույն արժեքավոր ուսումնասիրությունը կարևոր ներդրում է հայ պատմագիտության մեջ: